ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» մայիսի 2013թ. **N-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2013 թվականի ծրագրի վերաբերյալ» N580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Շիրակի փողոցի հ.18 շենքի հ.42՝ 105.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.01.2013թ. հ.29012013-01-2036 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Անահիտ Սարդարյանին և Կարլեն Ալոյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անահիտ Սարդարյանը և Կարլեն Ալոյանը դիմել են Երևանի քաղաքապետարան՝ Շիրակի փողոցի հ.18 շենքի հ.42՝ 105.1քմ ընդհանուր մակերեսով բնակարանն իրենց անվամբ մասնավորեցնելու խնդրանքով:

Ներկայումս նշված հասցեում գտնվող բնակարանը համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 29.01.2013թ. հ.29012013-01-2036 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն «Չարբախ» համատիրության նախագահի կողմից 20.11.2012թ տրված Հ.328/01 տեղեկանքի՝ Անահիտ Սարդարյանը կատարել է բնակարանի հետ կապված բոլոր վճարումները:

Անահիտ Սարդարյանը նշված բնակարանում բնակվում է 2001 թվականից, իր միջոցներով է կատարել բնակարանի վերանորոգման աշխատանքները, տեղադրել դուռ, վերանորոգել ջրամատակարարման խողովակները և կոյուղագծերը: Անահիտ Սարդարյանը նշված բնակարանում մինչ օրս բնակվում է ընտանիքի յոթ անդամներով, հետևյալ կազմով՝ Անահիտ Սարդարյանը, Կարլեն Ալոյանը, Արգինե Ալոյանը, Կարեն Ալոյանը, Վրեժ Գրիգորյանը, Աննա Ալոյանը, Արեն Գրիգորյանը: Աննա, Կարեն և Արգինե Ալոյանները, ինչպես նաև Վրեժ և Արեն Գրիգորյանները հրաժարվել են մասնակցելու բնակարանի մասնավորեցման գործընթացին:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ստորաբաժանման ղեկավարի 18.03.2013թ. հ.ԿԽ-282022 տվյալների համաձայն, Անահիտ Սարդարյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և վերջին 5 տարվա ընթացքում օտարում և ձեռքբերում կատարված չէ:

Նկատի ունենալով այն, որ Անահիտ Սարդարյանին և Կարլեն Ալոյանին իրենց միջոցներով են վերանորոգել բնակարանը, վճարել բոլոր կոմունալ և սպասարկման վճարումները և համաձայն բնակչության հաշվառման մասին հ.340146 և 340145 տեղեկանքների՝ վերջիններս 2010 թվականից հաշվառված են նշված հասցեում և մինչ օրս բնակվում են քննարկվող բնակարանում, ինչպես նաև այն, որ Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի համաձայն Երևանի քաղաքապետի որոշմամբ կարող են սեփականության իրավունքով անհատույց օտարվել համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները կամ բնակելի տները միայն այն անձանց, ովքեր փաստացի բնակվում և հաշվառված են տվյալ բնակարաններում կամ բնակելի տներում՝ ներկայացնելով բնակարանը զբաղեցնելու իրավահաստատող փաստաթղթեր, նշված հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարելու համար անհրաժեշտություն է առաջացել կայացնելու Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշում, որով կլուծվի Անահիտ Սարդարյանի և Կարլեն Ալոյանի ընտանիքի բնակարանային հարցը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ